

Յ Ե Լ Ե Կ Ե Թ Ը Լ Է

Ժ Ա Ղ Կ Ե Փ Ո Ւ Ն Յ

1. «Հայերն և դրացի լեզուները»։ - 3. «Հայ-կաթոլիկների դպրոց Թիֆլիսում»։ - 3. Գրասէր։ - 4. «Առ-մուսնա»։ - 5. Ծագականայ Թերթեր։ - 6. «Տարազ, շարասթաթերթը»։ - 7. «Ժողով» - կրասմեսայ Կանդուս։ - 8. «Գիտութիւն»։ - 9. «Հայաստան և Կարման երկրները»։ - 10. «Մերի պեղումներ Նունուպենը»։ - 11. Հին-Տայերնի մայրաքաղաքի մասին։

1. «Հայերն և դրացի լեզուները»։
 — Ուսումնասիրելի այս առումն Մայրի թուին մէջ աւետեր էինք թէ որո՞ք. Պետեր-սըն Հայերնագէտն Armenisch und die Nachbarsprachen անուամբ հետաքրքրական և ընդարձակ աւսումնասիրութեան մը վրայ կ'աշխատի ու քիչ ժամանակէն մամուլ պիտի յանձնէ (տ. ՀՊ. ԺԷ. էջ 131)։ Այս աւսումնասիրութիւնը հիմայ լոյս տեսած է ԱՄ ռուսումնասիրութիւն լիթ. հաստիւն մէջ, որուն 334 — 485 էրեսները կը գրուէ։ Մենք յիշեալ աւսումնասիրութիւն ի ձեռնի շուրջը, այլ անկէ երկու արտաոտի պիտի, զորոնք բարեհաճած է ու շարկել մեզի ինչնին իսկ յոյգ. Հեղինակը։ — սրտագին շնորհակալութիւննիս մեր Մեծայարգ Բագրեկամին՝ հրատարակաւ։ Չենք ուզեր մանրամասնորէն խօսիլ «Հայերն և դրացի լեզուները» ռուսումնասիրութեան մէջ քրքրուած հետաքրքրաշարժ խնդիրներուն վայր։ - Հայ-ձայնական յորինուածութիւնը, Հայերնէ փոխառեալ բառեր թրքերէնի մէջ ք. 500 տարինն ուելի յառաջ, Հայ-երի յոյգականն՝ բնիկ Հայ-կական և է ոչ թէ կուկասեան լեզուներէ փոխառութիւն ևւ — վասն զի որո՞ք. Պետեր-սընի այս պատուական երկին թարգմանութիւնը ինչպէս խոստացեր էինք, թերթիս յաւորդ կամ լու ևւա գալ առումն առաջին թուով պիտի սկսիք տալ Հանգէտի ընթերցողներուն։

2. «Հայ-կաթոլիկների դպրոց Թիֆլիսում»։
 — ՀՊ. ԺԷ. «Մշակի» յոյգ. աշխատակիցը Պր. Մ. Մշակի մէջ (թ. 235) կը գրէ սա հետեւեալ հետաքրքրաշարժ սողերը. «Մաս ժամանակներուն կ'իրագործի մի ծրագիր, որի մասին վաղուց միջնորդում ևւ կոպիտի հայ-կաթոլիկները. Թիֆլիսում՝ կը բացվի հոգեւոր սեմինարիա յատկապէս Ռուսաստանում բնակվող կաթոլիկ Հայերի համար։ Չենք կասկածում, որ այս նոր հոգեւոր դպրոցի հիմնադրութիւնը մեծ դարկ կը տայ նրանք բարոյական ևւ կրթական զարգացման։ — Գպրոցի տեսչի պաշտօնի համար թեկնածու է համարվում ևւ հաւանա-

կանարար կ'ընտրվի Տեր Ս. Ա. Տեր-Արարհասան, բնիկ Ալեքսանդրոպոլի, որ կը կրթութիւնն առել է Հոսովում ևւ մինչև վերջին տարին վարում էր Հայոց Արարարների վերստեսչի օգնականի պաշտօնը։ Իսկ այժմ գտնվում է արքայի Ռուսաստանում։ - Հայ-կաթոլիկների գպրոցի հաստատութիւնը որչա՞ն ևւ արդէն 1893ի կայսերական հրամանագրի մէջ, բայց զանազան հանգամանքների պատճառով հետաձգվեց։ — Հայ-կաթոլիկների հոգեւոր վարչութեան վերաբերեալ, անցեալ տարվայ, նոր պետական կրթագորութեան համաձայն, որի մասին հարեւիր ժամանակին խոսել ենք «Մշակում», գպրոցի հարցը վերջնականապէս վճռված է գրական կերպով։ — Գալով Թիֆլիսում հիմնվելի Հայ-կաթոլիկ կոնստաոթիային, այս ինչիցը փոքր ինչ աւազոււ, որովհետեւ կոնստաոթիայի նախագահի կամ Հայ-կաթոլիկ առաջնորդի անձնակորութեան մասին գեւ ևւա համաձայնութիւն չէ կայացել առաջ կոտաճարութեան ևւ Հոսովի աթոռի մէջ։ Յոյս կայ որ վերջիշեալ Տեր-Արարհասանի ընտրութեամբ այս տարաձայնութիւնն էլ կը վերջանայ ևւ շուտով կ'ունենանք Թիֆլիսում Հայ-կաթոլիկների հոգեւոր վարչութեան վերաբերեալ բոլոր ծրագրված հիմնարկութիւնները։ — Բաղձալի է որ այս յիշատակալ պաշտօնները Տեր-Արարհասան վարդապետին պէս ետանդուն, ժողովրդէն սիրուած ու կարող անձնակորութեան մը ձեռքը յանձնուին։ Ռւբախալի է ևւ շատ ուրախալի, որ մեր Ռուսահայ-կաթոլիկեայ հասարակութիւնը կը հասնի վերջապէս իւր տարիներէ ի վեր ծրագրած ու ջերմանքերմ փափաքով բաղձացած նպատակին։

3. Գրասէր։ — Ներկայ տարւոյս Ապրիլ ամսէն սկսեալ կը հրատարակուի Աղեքսանդրոյ մէջ Գրասէրի անուն գրչատիպ կիսամսեայ թերթ մը, որուն մինչև ցարգ լոյս հանած թերթիկները հրուէ այս օրերս անսնելու ևւ թղթատելու հաճոյքն ունեցալը։ Այս «գրական ու գիտական», կիսամսեայ թերթիին գրեթէ ամէն յօդուածիներուն մէջ որչա՞ կը նշմարուին գեւ ՀՀ հասանացած, չկազմակերպուած մտաց արտասայտութիւններ, հանդերձ առատ տառասաղներով։ Բնականաբար սակէ աւելին չէր պատուելի թերթէ մը՝ որուն ղեկը «նոր սկսնակ», պատանեաց ձեռքն է։ Այսու հանգերմ պետք ենք ըսել որ այս նոր սկսնակ գրաժամներուն գրչատիպ թերթը՝ ուրիշ շատ մը Հայ թերթերէ աւելի արժանի է իւր գոյութիւնը տպագրի

ատերով պահելու Գովելի և Գրատերի համեստ խմբագիրներուն եռանդը — սպառնայ գրագետներ պարտատել: Սակայն ամեն թերթի ալ իւր ուղղութիւնն ունենալու է, որով ամեն գրագետը «անզուտ» սպարեալ չ'ունենար իւր գրակամը՝ ամեն սեռի արտադրութիւններովն. ընթերցողին գլուխն արգակելու...:

4. «Armenia». Կերեսայ թէ կամայ կամայ պիտի ունենանք շատ մը լեզուներով Armenia պարբերականներ, որոնք Արմէնիա գոմարտա երկրին եւ Արմէնիա կամ Արմէն թշուառ ազգին անցեալն ու մանաւանդ ներկան ծանօթացնելով Եւրոպացի եւ Ամերիկացի քաղաքակիրթ մեծ ազգերուն՝ հայանպաստ մեծ հոսանք մը յառաջ պիտի բերեն ու վերականգնեն իրաւազուրկ ընկալեցեան արդար իրաւունքները: Մինչեւ օրս հայերէն լեզուու միայն մէկ Արմէնիա ունեցած ենք — Պ. Փոթիմուզալեանինը: Հունգարերէն լեզուու ալ մէկ — Պ. Սոնգոսի Armenia, որ նուիրուած է ընդհանրապէս թերթին համանուն ազգին եւ մանաւորապէս՝ Մայր-Արմէնիայի մէկ հասուածին — Հունգարացի գաղութին: Գաղղիական տղալիզեան համար երկու Արմէնիա ունինք. մէկը Տայատեր ու հայանուեր Վիլսարի եւ ընդ Pro Armenia, իսկ միւսը Պ. Չերազի L'Armenie: Մինչեւ ցարդ Ալգիռնի գաւախներուն եւ Եանքիններուն համար կը պակտեր Արմէնիա մը, այժմ այն ալ ունինք եւ — երկու հասու հայաստանի Ամերիկացի բարեկամներն ու բարեկամու հիները ձեռք ձեռքի տուած՝ արտաքնով ու ներքնով լաւ հոգացուած Armenia պարբերակիր մը կը հրատարակեն ի Բոստոն¹, իսկ Լոնդոնի մը ըջոյ կը տեսնէ Պրոֆ. Բուսմայեանի խմբագրութեամբ — Armenian News: Արքեպ. հարկ կայ շէտեիւր թէ իւրաքանչիւր անհասարակ իւր շայ անունը կրելու բոխան ունի, պէտք է այս մարդասիրական գործին՝ ըստ կարի իւրուս՝ օգնել — բաժանորդագրութեամբ կամ նուէրներով:

5. Ծգիպատայ թերթեր: — Պրոֆ. Գալֆայեանէն՝ օրուն «Հայ երաժշտութեան» մասին ըրած բանաստեղծութիւնը բաւական աղմուկ հանեց Պարիսի լրագիրներուն մէջ, ընդունեց ընդ յայտարարութիւն մը, ուսկից Կոնստանդնուլէ Պրոֆ. Գալֆայեան մտադրէր եւ աւարչկայ Գեգու. ամսոյս Չիքն Կոնստանդնուլէ գեղարուեստական (երաժշտութիւն, ճապարտար-

պետութիւն եւն) եռամսեայ հանդէս մը հրատարակելու — հայ-ֆրանսերէն լեզուներով: Կոնստանդնուլէ նպատակն է 1. «Հայ արուեստը Հայուն ճանչցնել, 2. Եւրոպական արուեստը Հայուն ճանչցնել», 3. Հայ արուեստը Եւրոպային ճանչցնել: — Երեսանք թէ այս գեղարուեստական թերթին ինչպէս նաեւ յաւըրդներուն վրայ վերստին առիթ կ'ունենանք խօսելու: — Եգիպտոս հայ թերթերը կը ձայնձընեն թէ Պ. Կ. Գալֆայեան ձեռնարկած է Անողջապահութիւն անուն եռամսեայ թերթի մը հրատարակութեանը (տ. «Ազատ Բեմ», Թ. 29): — Արիւշ ոչ նուազ ուրախալի լուր մըն ալ, որ նոյնպէս փարսասնեալ երկրէն կու գայ, այս է թէ նախորդ եւ ներկայ գրական սերնդեան ամենէն փայլուն ներկայացուցիչները՝ Աղէքսանդրիցի մէջ առաջինայ նոր ասորիէն պիտի հրատարակեն Շիրակ անուամբ բաւական հաստատիր, գրակամ եւ ընտանեկան ամսաթերթ մը: «Արշալոյս», էն (Թ. 455) կը տեղեկանանք թէ Եգիպտոսացի երկիրը 1905ին հայ լրագրութեան անհաստանք պիտի դառնայ: Պատն զի Արշալոյս, Ազատ Բեմ, Արտանիս, Ժողովուրդ, Լրագրեր, Գրագրեր եւ ուրիշ մէկ քանի — ինչպէս վերջիցեալ Շիրակ, Անողջապահութիւն կամ Անողջապահիկ — թերթերէն զատ՝ Երեսանքն սկսեալ լոյս պիտի տեսնեն հոն ասորիէն Միսուսն, Ուղարներ, Հորիզոն, Հարուած՝ «Եւ երկու հասու իսկ խանձարուրի մէջ փոթեալուած ահեղ պատուհասներ, Մեղրոսի ու Պիճակի կամ Փեթակի պէտ անուններով թերթեր», Ի հարկէ այս ամեն յայտարարութիւններն եւ լուրերը շատ ուրախալի են, իմէ՛ք — իրականանան, բայց քիչ մըն ալ լրագրութեան չ'էպայս:

6. «Տարագոյ շարթթաթերթը վերսկսու իւր հրատարակութիւնը, որ բարձրագոյն իշխանութեանն քանի մը ամուսան գաղարի գատարարուած էր: Կեր ձեռքը հասած քանի մը թուերը ցոյց կուտան թէ «Տարագոյ» յառաջուն ուղղութեամբ եւ ուժերով յառաջ կը մղուի — աշխուժիւ, միայն յառաջուն խիտ քննադատութիւնները կը պակսին...:

7. «Ժողովուրդ» — Կիսամսեայ հանդէս: — Բաւական ժամանակ է Վեր օրաթերթէ շարթթաթանի վերածուած «Ծաղիկը» որ գրական հրատարակեան քաշուած էր, Սեպտեմբերի 10էն սկսեալ նոր խմբագրական կազմով մը վերսկսու իւր հրատարակութիւնն — կիսամսեայ հանդիսի վերածուած: «Ծաղիկի» ղեկա-

¹ Հասցեն՝ Editor "Armenia" 2285 P. O. Box, Boston, Mass. (U. S. A.)

վարն է Գր. Ա. Անտոնեան — «Արեւելքի», «Աջ ու ձախ», երու ծանօթ գրիչ-հրատարակիչը: Գ. Անտոնեանի Հայ գրագէտին ինքնական, բարոյական վերահիշ, անոր առաջային եւն մասին գրածները ուշադրու են. զապարուէ է եւ շատ, Գ. Եօվհ. զազանճեանի «Ժողովրդային լեզուն բանաստեղծական կողմերը», յօդուածը, նոյնպէս Գ. Ռ. Ջարգարեանի «Գաւառական կենցեղի պատկերները, գեղեկական հռեքեմները», եւն: Գեշ չէր ըլլար, եթէ «Ետդէկի» մէջ ընդհանրապէս գաւառական կենցեղ քթքող գրիչներու աւելի սեղ տրուէր: «Ետդէկի» մէջ կաւկասեան Հայոցմէ եւս գրուածքեր կան: Ռուսահայոց ժամանակակից գրականութեան անտեղեակ մէկը՝ պիտի կարծէր թէ Ռուսահայ ծանօթ վկայագիր Գ. Ա. Նարոնեանի «Անհաւատ, վկայակը», «Առողջագոհիկ թերթին», խմբագիր Գր. Ա. Արծրունուէ ոյ «Ազդեկ» բժշկական գրուածքն է Ա. Շատուրեանի քանի մը բանաստեղծութիւնները արեւմտեան գաւառաքարտով գրուած են — «Ետդէկի», համար. մինչդեռ անոնք թարգմանութիւն կամ փոխադրութիւն են արեւելեան հայերէնէ արեւմտեան հայերէնի — անանց երկուց ծանօթութեան մը...» «Ետդէկի» յարասեւութիւնը յարեւելեան կը մտղծենք իւր լու գծած եւ ընդգրկած ճամբուն մէջ:

8. «Գիտութիւն», անուամբ գաւակերազարդ ամսաթերթ մըն ալ լոզան քաղաքին մէջ լայ տեսնել սկսած է խմբագրութեամբ «Գիտութեանց Դոկտոր», Գր. Մ. Նալբանդեանի: «Գիտութեան», նպատակն է «տարածել եւ ժողովրդականացնել գիտութիւնը եւ անոր անհամար գեղեցիկ, օգտակար եւ գործնական կիրառութեանը հոյ ժողովրդի սակն խաւերուն մէջ: ... Գիտութիւնը մասնագիտական թերթ մը պիտի չըլլայ, այլ «հանրագիտական»: Ցարակոյս չկայ թէ Գր. Նալբանդեանի թերթին բնագիտական, քիմիական, կենդանաբանական, բուսաբանական, երկրաբանական, աստղաշխարհական, կենսաբանական, բժշկական, արհեստագիտական, գիւղատնտեսական եւն օգտակար են, բայց Տիկ. Նալբանդեանի մանկավարժական հաստնին պէտ նիւթեր մեր ազգին աւելի օգտակար կրնան ըլլալ — Համաձայն ենք Գր. Նալբանդեանի գիտական բառերու հայացանին խնդրոյն մասին ունեցած սեսութեան: Թարդութիւն այս թերթին ալ եւ երկար կենցեղ:

9. Հայաստանի նարեանները: Նոր-Հայաստանի լաւ քարտեզի մը պակասը շատ

զգաւն էր: Այս պակասը մասամբ իւրք կը լրացնեն Եւրոպայի Հայ Ռուսանդական Միութեան հրատարակած «Հայաստանի եւ հարեւան երկրները», հայաստան քարտեզը, որ բաւական խնամքով պարաստուած է: Թալուերով՝ գեղեցիկ կազմի մը մէջ կ'ամփոփուէ, բայց շատ գիւրաւ կրնայ նաեւ շրջանակի մէջ անցուել սակաւատե կախելու համար: Քարտիսի վարի երկու դաստարի ծայրերուն վրայ նիկիկից այն մասը՝ որուն մէջ Ջէյթիու իր գտնուի եւ Հայաստանի այն կտորը՝ ուր Մասուկեան է ա իրենց շրջականներով, մեծցուած են: Այսպիսի գեղեցիկ եւ արժան (1 Քր.) Հայու սրտին մտ գործ մը ձեռք բերելու համար՝ կարենք թէ մեր յանձնարարութեան պէտք թէ Գիմըլ Union des Etudiants Arméniens de l'Europe, Rue de l'École de Chimie 2, Genève (Suisse).

10. «Անիի պեղումների հետեւանները»: — «Մշակ իւր 241. Թուին մէջ Ա. Մարի գրէն կըն ուշագրաւ յօդուած մ'ունի, որ շատ հետաքրքրական ըլլալուն պատճառաւ զայն ամբողջովին կ'արտագրենք հաս՝ «Ախուրեանի եւ Ետդէկեանի մէջ գանձող տարածութեան վրայ, ուր շինած է Անին — մի շատ նեղ հաս կայ, ուր իր քրտարած փոքրիկ քաղաքի համար Աշոտ Ողբումն կառուցած ամբողջութիւններ, ոչ թէ այդ ձորերի մէջ գանձող ամբողջ տարածութիւնը, այլ մի շատ փոքրիկ մասը միայն վերցնելով: Այդ ամբողջութիւնների շտաղկանորի կողմի վերընտրութեան մտ մի շատ բարձր, բլուրնաման հողակոյս կար, ուր չէին երեւում քաղաքի աւերակների օտլորական քարակոյտերը, այլ միայն մի շարք քարեր, որոնք երբ եւ իցե ծառայել են իբր հիմք մի որ եւ է շինութեան: Ահա այդ քարերի շարքից սկսեց պոթօ: Մտա իր պոթութիւնը: Հետեւանքը յուսահատական էր: Այդ քարերի շարքը, որոնք երեւում էին մի շինութեան պատ, այդ շարքերով կը վերջանում էին, այլ խօսքով չէնքի հիմքն էին: Գրտ սակ սկսվում էր ամբան Շողի մի ահապան շերտ, որ 20 մշակ մտ երկու շաքաթ վայ ընթացքում շարունակ դէն էին ածուճ ու չէր վերջանում: Գ. Մառ տարօրինակ համարութեամբ սպասում էր թէ այդ հողի շերտը ուր եւ ինչպէս է վերջանալու: վերջուպէս երեւացին շինութեան պատն: Բացվեցան նախ առանձին առանձին ունակարանները իրանք բաժանմունքներով եւ իւրաքանչէրը իր թնկերով, — որ ինչպէս երեւում է ծառայել է, ոչ միայն հաց եւ կերակուր եկեւ-

լու, այլ եւ բնակարանները տարացնելու: Վեր-
ջապէս բացվեց եւ փողոցը, որ բարձր է բնա-
կարաններից, այնպէս որ 4—5 ոտք սահող-
քից իջնելով պէտք է մտնել տներից ներս:
Այդ փողոցի մի մասում, ուղղակի մէջտեղը
մի արշինապի փորելով դուրս եկաւ դար-
ձեալ մի թոնիրի ճացորդ: Այդպիսով պարզ-
վեց, որ քաղաքի այդ ամենահին մասում, երեք
զանազան բնամայրից անկախ ժամանակամիջոց-
ներում մտնակարաններ են շինվել: Փողոցի տեղը
մի ժամանակ տներ են եղել, որոնք կործանվել,
հողի են հաստարվել, եւ նրանց աւերակների
վրա կառուցվել են այն բնակարանները՝ որոնք
ամբողջապէս բացվեցան իրանք բաժանմունք-
ներում: Բայց մի ահռելի փոթորիկ, տարբեր մի
մեծ ցոժ, ոչ միայն կործանել է այդ բնակա-
րանները, որոնք շինված էին նախկինների աւե-
րակների վրա, այլ եւ նրանց վրա անել հողն մի
ահագոյն շերտ՝ խառնված կենդանիների եւ
մարդկային սոսորների, խեցեղէն բազմատեսակ
ամանների կտորտանքների, պղնձէ դրամների
հետ: Բայց որտեղից, ի՞նչ ձեւով, ի՞նչ պատ-
ճառներից գոյացել է այդ ահագին հողաբլուրը
բնակարանների վրա, սա մի հարց է, զեռ եւս
ստորոշ: Ա՜հ սա այդ հողաբլուրի վրա եր մի շէնքի
իրք հիմք ծառայած քարերի վտրը — Անիի
տների ամենավերջին շքանի պատկանող ճա-
ցորդը, որտեղից սկսված էին պեղումները:

Դայելով բարձրութիւնից կատարված աշ-
խատանքների վրա, տեսնելով փողոցի երկու
կողմ շարված տները, որոնք միայն կտուրներն
են փուռ եկած (բնակարանները լուսաւորվել
են երգիկից ինչպէս Հայաստանի բոլոր հին եւ
ժամանակակից բնակարանները) մի րօպէ մարդ
երևակայում է ամբողջ Անին պեղված, լուռ
քարակոյտերը բացված, խորհրդաւոր հողա-
բլուրները մաքրված, եւ հսկայ մոխրակոյտերը
զեն անված, մի շարք նշանաւոր շէնքեր ու հա-
րիւրաւոր մեծ ու փոքր եկեղեցիներ իրանց կից
գաւթի՛՛գաւթարաններով ի յայտ եկած, գտնված
հարիւրաւոր արձանագիրներ, որոնք նոր լոյս են
տեսնվում եւ Անիի թերի պատմութիւնը լրաց-
նում: չք կայ այլ եւս մտի՛ք անկիւն. յայտնի է
այլ եւս այն խորհրդաւոր բլրակների ինչ ինչելը,
որ ձեր ոտքի տակ թնդում, խուռ ձայն է հա-
նում, նշան՝ տեղի գատարկութեան... եւ այս
բոլորը երազ չէ. գործը սկսված է այնպիսի
եռանդոտ, լուրջ եւ համբերատար գիտնականի
նախաձեռնութեամբ, որպիսին է պրօֆ. Մառ:
Դա որոշել է եկող տարի շարունակել իր պե-

ղումները փոխանակ 20ի 100 մշակ աշխա-
տեցնելով, մի քանի խմբերի բաժանած: Հետեւ
չէ այն օրը, երբ հնար պիտի ունենայք գտնե
պատկերի վրա Անիի վերականգնած (РЕСТАВ-
РИРОВАНЫИ) տեսնելու: Գիտի երեսուն նրա
հուժկու բարդերը, հսկայ երեքկարգ ամրու-
թիւնները իրանց առամներով, քաղաքի դըռ-
ներից ներս աջ ու ձախ ձգվող ու կրկին ձիւ-
ղաւորվող նրա նեղ, լայն կամ ծուռուծուռ
փողոցներն ու հրապարակները եւ հարեւաւոր
եկեղեցիների բարձրամասն ու բազմատեսակ սուր
սուր գմբէթները եւ այդ բոլորի վրա կրկին ու
կրկին պարիսպներով շրջապատված քաղաքին
տիրող միջնաբերդը՝ որ առձաններով ու ար-
քայաւանով պարզվել է:

Գեղումների հետ միաժամանակ կատար-
վում էր նաեւ մզկիթի վերանորոգութիւնը, որ
իրք թանգարան պիտի ծառայեր պեղումներից
դուրս եկած իրերի, օրին կ. Մառ անուանում
էր նախաձեռն, իսկ շէնքի կապալառուն, ուսում
գէորգը — քնարան: Այդ կիսաւեր շէնքը
այժմ մի ընդարձակ սրահի կերպարանք է ստա-
ցած: Կառ հարաւարեւմտեան անկիւնը, որ
մտրեւ պատմագուր կերպով նկատված, հր ամեն
րօպէ վառանում է մի գառնիկայից ցած գլոր-
վելով Ախուրեան թափվելու՝ այժմ ամբարան
է. նրա կամարները պատով ծածկված են, մէջ-
տեղում մի ամուր գուռ խորհրդաւոր կերպով
փակում է այդ շէնքի մուտքը: Իսկ նրա Առու-
րեանի վրա նախը առամուտների նշանակա-
հագցված են շքանակներ ու սպակներ: Վերա-
նորոգված է նշնայէս մզկիթի կամարակապ
ներքնայարկը, որ ունի նաեւ մի առանձին գուռ:
Նախկին՝ քրիստոնէական այդ շինութիւնը —
որի ինչ նպատակի ծառայելը զեռ չէ որոշված
— փոխարկվել էր մզկիթի, իսկ այժմ էլ թան-
գարանի՝ դէպի իրանի է գրաւում Անի այցելողի
ստաղին . քայլերը, այցելուն այդ կամարների
տակ անտնում է հայի ճարտարապետութիւն,
արուեստի եւ փարթեմութեան շօշափելի, բայց
զեռ եւս սակաւաթիւ նմուշները. չէ՞ որ զեռ
նորահաստատ է թանգարանը. այցելուն ընկ-
նում է խոկման մէջ, զանազան մտքեր տիրուր
ու մտայլ տանում են նրան դէպի անցեալի
որբերգական իրողութիւնները, պատկերները
երևում են նրա աչքին մէկը միւսից աւելի

Ի նորոգած ընդութիւնները քայլ եւ սալը, որ
արբուծի ապարտքը պէտք է լինի այն ընդարձակ շինու-
թեան աւերակները, որ բաւում է միջաբերդ գառնի
գառնի: Իսկ այժմեան պատու համարված ունի քե-
ղն ժամանակի շէնք է:

աստեղի, մեկը միւսից աների արեւնազանգ, բարերը լեզու են անում, շնչում են շատ ու շատ բաներ եւ այդ շունչին միանում է թանգարանի ստորոտից հասող Ախուրեան իր որոտանան, ասեղ եւ մեծագույն աչաղակով :

11. Հին-հայերէնի ձայնագիրտութեան մասին: — «Zur altarmen. Lautgeschichte» վերնագիրը կը կրէ այն յոգուածը, որուն միայն առաջին մասը հրատարակուած տեսնը տակաւին ի թերթին BB. XXVIII. Այս հաստատին հեղինակը ազգաւ երբայեցի մըն է — J. Scheffelwiltz անուն, աշակերտած Գր. Բ. Խալաթեանցի. ռուսի եւ նոր հայերեանագետն է: Էլեֆանտինոյ՝ յընթաց հայերէնի ուսման, «Տաւաքած է հին-հայերէնի ձայնագիրտութեան մասին հում նիւթեր, որոնք զինքն ի վիճակի բլած են լուստարանելու այլեւայլ նոյնիսկ միշտեւ ցարդ տակաւին անծանօթ հայերէնի ձայնականօրէնքները»:

Ա. Հայերէնի լծօրգ հնգգ. քմական պայթուցիկները. 1. հնգգ. հ, = հայ. ա, 2. հնգգ. կ, = հայ. ց, 3. հնգգ. կթ, = հայ. -խ, 4. հայ. Լ տաւին տալեւ հնգգ. Է, սղջնատառք կորուած է, 5. հնգգ. ԷՏ, = հայ. ց, — հայ. ց = հնգգ. Է, ԷՏ, ՏԷ, ՏԷ, — հնգգ. ՏԷ = հայ. շ? — հնգգ. ԷՏ+Մ = շ, 6. հնգգ. ց, = հայ. ծ (յ) եւ Է, 7. հնգգ. ց,ի = հայ. յ բառակցման, նոյնպէս ր, Լ, 2 բառերէն վերջը եւ 2 բառավիջն ձայնաւորէն վերջը, 8. ց,ի+ժ = հայ. սթ, 9. ց,ի = հայ. շ, Բ. քմառագտառական պայթուցիկները. հնգգ. Է = հայ. ի, — Է, = ի (բառակցման) ք (բառակցման) 2, ք հնգգ. ց,ի = հայ. շ ձայնաւորէն վերջը, ձայնաւորէ մը վերջը) — հնգգ. Է, եւ ԷՏ, = հայ. յ, 11. հնգգ. ց = հայ. ի, — հնգգ. ց, = հայ. ծ եւ ծ, 12. հնգգ. ց,ի = հայ. ք, ցա՛ի = հայ. Լ, 13. հնգգ. Էի եւ ԷիՏ = հայ. ի, 14. հնգգ. ՏԷ = հայ. ց, — հնգգ. ց = հայ. ց, — հնգգ. ցթ, ցշե = հայ. սթ.

Էլեֆանտինոյ՝ որչափ կ'երեւայ, լաւ տեղեկութիւն չունի հայկական լեզուի մասին սակն գրուածքներուն վրայ. վասն զի շատ մը բառեր, որոնց ստուգաբանութիւնն իրեն կը վերագրէ՝ այլք այլուր կատարած են. բայց պէտք ենք յաւելլել նաեւ թէ շատ մը բառերու նոր ստուգաբանական մեկտութիւնն ալ Էլեֆանտինոյցի պարտական ենք: Ընդհանրապէս Հիւրշմանի կը հետեւի Էլեֆանտինոյցի եւ Պեղերստի դէմ կը մտադի բանի մը բառի մեկտութեան մասին, բայց յանդիւրի: Վասն զի Պեղերստի բառները բոլորովն սխալ հասկնցած է եւ կամ լաւ ըմբռնած չէ. այնպէս որ Էլեֆանտինոյցի ապացոյցները չունին այն զօրութիւնը, որով կարենան Պեղերստի տեսութիւններէն

կէտ մ'իսկ խախտելու. Ինչպէս որ արդէն Պեղերստի յայտարարեց ի թերթին KZ. XXXIX, էջ 485: Հնգեր. ց-, ցա- եւ ծագած հայ. կ-ի համար Էլեֆանտինոյցի յառաջ բերած օրինակները յարմար ու յարզ կ'երեւան առաջին հայեցուածքին, բայց ըստ Իքեան համոզուէ եւ ընդունելի չեն: Չենք գիտեր թէ ուսից ցտած է Էլեֆանտինոյցի կողմէ, կուց, հետում եւն բառերը, որոնց հայկական ծագումը կամ գոյութիւնը անծանօթ է մեզի: Հնակ (= ըսվ, կայ) կրնայ աղերս ունենալ հնգեր. *pek, հին հնգեր. pāca «չուն» «կայ», գերմ. fangen բառերուն հետ, բայց թէ հետի բառը հետում մայ մէն ալ ունի նոր կ'իմանանք: — Կացի (= մանուկ) բառն ալ, որ «հին հայերէն» բառերուն կարգն անցած է՝ վրական ծագում ունի Սիւսնամ եւ սնանիմ բայերուն արմատները հաստատապէս սուն զնելը՝ յայտնապէս սխալ է. վասն զի սուն միայն սնանիմ բային արմատն է, իսկ սնանիմն արմատն է սին: — Նոյնպէս սխալ է խաւսնամ բային — ձեւէն զաս՝ որ ըլլալու է խաւսիմ — ստուգաբանութիւնն եւս. խաւսիմ յուն. φράζωի հետ անենեւին իմանութիւն չունի, այլ չաւորութիւն հետ. ի հարկէ ստոր համար յունարէնի մէջ գրի տեղափոխութիւն (metathese) պէտք է ընդունել — աստիճան. ԿԱՍՄ- (ս. Pedersen KZ. XXXIX էջ 335 եւն): Մենք միտք ունինք Էլեֆանտինոյցի այս «Հին հայերէնի ձայնագիրտութեան մասին, յոգուածով դեռ զգաղելու, երբ աշխատարարութիւնս մեր ձեռքը կ'ունենանք ամբողջովն»:

ՅԵՏԻՎ.

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՆ
- ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ — Արշակունի դասներ — փոքր-փոքր Ասպետին Աղեցասնոց Պետրովիչ: 337:
- ՄՍՏՆԱԳՐԱԿԱՆ — Խոսքովի թարգմանիչն եւ իւր երկարութիւնները: 353: — Ս. Սահակ եւ Ս. Մաշտոցի գործունէութիւնը յօգուտ հայ լուսաւորութեան: 361:
- ՄՇՈՒՐԱԳՐԱԿԱՆ — Արարացի մատենագրութեան ստանի մասին: 367: — Հին հայոց տեղոյ անունները: 372:
- ՍԵՆԵՒՈՅԷ
- ՓԱՂԱՐՓՈՒՆԷ, 380:

ՀՐԱՍԱՐԱՊՈՒՅ ԵՒ ՊԵՏԱՍՄԱՆԱՍՈՒ ԽՐԱՍԱԳՐ
Հ. ԲՈՎԱՆԵԼ Վ. ՊԵՐՏԵՅ
ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԲՐԵՐԻՈՆ ՑԳՐԱՆ

